ՀՀ տարածքային կառավարման եւ
ենթակառուցվածքների նախարար
Գնել Սանոսյանին
«Առավոտ» օրաթերթի լրագրող
Հռիփսիմե Հակոբի Ջեբեջյանից

(Արշակունյաց 4, 15-րդ հարկ, հեռ. 0037496025004,
hripsimej@aravot.am)

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 եւ 51 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

• Արամի 23 հասցեի շենքի վերականգնման աշխատանքների հետ կապված ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը «Առավոտի» գրավոր հարցմանն ի պատասխան նշել է, որ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերը՝ նախարարությունը համապատասխան ֆինանսական օժանդակություն ստանալու համար դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ժամանակավոր ամրակայման միջոցառումներ իրականացնելու համար, սակայն դեռևս պատասխան չի ստացվել: Ի՞նչ դիրքորոշում ունի այսօր նախարարությունը եւ այդ հուշարձան-շենքի գոնե ժամանակավոր ամրակայման աշխատանքների համար պատրաստվո՞ւմ է միջոցներ տրամադրել:

• Արամի 23 հասցեի շենքի ժամանակավոր ամրակայման աշխատանքների համար որքա՞ն գումար է նախատեսվում:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Հռիփսիմե Ջեբեջյան

2. 08.2021թ